



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն.....	4
ԳԼՈՒԽ 1.	8
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԸ	8
ԳԼՈՒԽ 2.	16
ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԺԻՉ ԳՈՐԾՔԱԿԱԶՄԻ ՆԿԱՏԱՍԲ.....	16
ԳԼՈՒԽ 3.	26
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.....	26
ԳԼՈՒԽ 4.	35
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԳՈՐԾՈՂ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԵՎ ՀՄԿՈՂԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.....	35
4.1 ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ	40
4.2. ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....	43
ԳԼՈՒԽ 5.	47
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	47
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	58

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետության ազգային անվտանգության մարմինների կողմից կիրառվող գործիքակազմը, որպես կանոն, ներառում է գաղտնիության զգալի տարրեր, ենթադրում մարդու իրավունքների էական սահմանափակումներ: Ստանալով պետության քաղաքական, իսկ երբեմն նաև ռազմաքաղաքական ղեկավարության կողմից առաջ քաշված խնդիրներ, ազգային անվտանգության ծառայություններն իրենց գործունեությամբ կարող են վնասել հասարակությանը, ոտնահարել քաղաքացիների և այլ անձանց իրավունքներն ու ազատությունները:

Հաշվի առնելով ազգային անվտանգության մարմինների գործունեության փակ, ոչ թափանցիկ լինելը, պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հետ մշտական շփումը՝ կարող ենք արձանագրել, որ մի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանափակվում է իրավապահ գործառույթներ իրականացնող մարմինների, ներառյալ դատական իշխանության մարմինների գործունեության դաշտը, մյուս կողմից օբյեկտիվորեն ստեղծվում է իրավիճակ, երբ շահառու անձինք կամ կազմակերպությունները կարող են տեղեկացված չլինել իրենց իրավունքների սահմանափակման վերաբերյալ կամ չպատկերացնել սահմանափակման ողջ ծավալը, հետևաբար և ձեռնամուխ չլինեն իրենց խախտված կամ «ներգործված» իրավունքների վերականգնմանը: Այս առումով, չարաշահումների, օրինականության սկզբունքի խախտումների բացառումը մեծապես պայմանավորված է ազգային անվտանգությունն ապահովող մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողական իրատեսական կառուցակարգերի առկայությամբ: Ակնհայտ է նաև, որ վերահսկողական արդյունավետ համակարգերի ներդրումն ինքնին չի կարող դիտարկվել ազգային անվտանգությունն ապահովող կառուցակարգերի, ազգային անվտանգության մարմինների կազմակերպական և գործառութային հիմնախնդիրներից անջատ: Ուստի, անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն ապահովելու հիմնախնդիրը պետք է համադրել այդ մարմինների կառուցվածքային հիմնախնդիրների, ներքին և արտաքին

վերահսկողական գործառույթների իրացման քննարկումների շրջանակներում, ինչպես նաև հիմք ընդունելով պետության կողմից ազգային անվտանգության սպառնալիքները կանխելու անհրաժեշտությունը: Ազգային անվտանգության մարմինների գործունեության հետ ուղղակիորեն կապված է տեղեկատվության գաղտնագրման ռեժիմի վերաբերյալ առկա իրավակարգավորումները: Անհրաժեշտ է բացահայտել տեղեկատվության գաղտնագրման և տեղեկատվության ազատության միջև սահմանված հավասարակշռության բնույթը և իրավաչափությունը:

Ազգային անվտանգության ծառայության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության բովանդակությունը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել ստորև ներկայացված հարցերը, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, շեշտը դնելով զարգացած անվտանգային համակարգեր ձևավորած պետությունների փորձի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետության պետական համակարգում դրանց կիրառման պայմանների համադրելիության վրա.

- Ազգային անվտանգության մարմինների համակարգի հստակեցումը, ազգային անվտանգության մարմինների ինստիտուցիոնալ գործունեության կազմակերպումը, ինչը ներառում է նաև ազգային անվտանգության կանխարգելիչ և պատժողական քաղաքականության համադրումը
- Ազգային անվտանգությունն ապահովող ճյուղային մարմինների գործառույթների կենտրոնացված և տարանջատված համակարգերի արդյունավետության չափանիշների վերհանում,
- Հսկողական և վերահսկողական գործառույթների հստակեցում, գերատեսչական և արտագերատեսչական կամ արտաքին վերահսկողության մեխանիզմների արդյունավետության, տեղեկատվության գաղտնագրման ռեժիմի քննարկում:

Ազգային անվտանգության մարմինների կազմակերպման և գործունեության տեսանկյունից ամերիկյան և արևմտաեվրոպական համակարգը հետաքրքրական է ազգային անվտանգության վերաբերյալ իրավական պատկերացման,

անվտանգության ապահովման ռազմավարական իրավական փաստաթղթերի մշակման, քննարկման, ընդունման, անվտանգությունն ապահովող կենտրոնացված ղեկավար մարմինների և ճյուղային գերատեսչությունների ձևավորման, կառավարման, անվտանգությանն առնչվող տեղեկատվության վերլուծական ուղեղային կենտրոնների գործունեության և համակարգման, ինչպես նաև անվտանգության համակարգում գործող մարմինների գործունեության նկատմամբ պետության ներկայացուցչական մարմնի կողմից արդյունավետ վերահսկողության ոլորտներում երկարամյա ավանդույթների և համակարգային կենսունակ մեխանիզմների առկայությամբ:

Սույն տրամաբանությամբ զեկույցի առաջին գլխում կներկայացվի ազգային անվտանգության մարմինների գործունեության կարգավորման գործող դաշտը, այնուհետև զեկույցի երկրորդ գլխում կբացահայտվի թե ինչ է ենթադրում ազգային անվտանգությունը, որ մարմիններն են ներգրավված ազգային անվտանգության ելակետային փաստաթղթերի մշակմանը, ինչպես է համադրվում ազգային անվտանգության կանխարգելիչ (ուղեղային կենտրոնների ձևավորում) և պատժիչ քաղաքականությունը (ազգային անվտանգության կոշտ և սարսափազդու մեթոդներ. ռազմական ուժի ցուցադրում, զինատեսակների քարոզ և այլն): Երրորդ գլխում կուսումնասիրվի ազգային անվտանգության մարմինների կառուցվածքը, գործառույթների բնույթը: Հատուկ ուշադրություն կդարձվի Ազգային անվտանգության ծառայությանը ընդարձակ, այլ երկրներում մի քանի մարմինների կողմից իրականացվող գործառույթներն ամբողջապես մեկ մարմնի կողմից իրականացվելու տրամաբանությանը և խելամտությանը: Սրանով պայմանավորված, հաջորդ գլխում կքննարկվեն Ազգային անվտանգության ծառայության նկատմամբ սահմանված դատախազական, դատական վերահսկողության բովանդակությանը, ինչպես նաև կներկայացվի Ազգային անվտանգության ծառայությանը վերապահված հիմնական գործառույթի՝ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման վերաբերյալ սահմանված երաշխիքները: Վերջապես, վերջին գլխում կանդրադառնանք խորհրդարանական արդյունավետ վերահսկողություն իրականացնելու

մեխանիզմներին, ինչպես նաև կքննարկենք գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելու, տեղեկատվությունը գաղտնագրելու հետ կապված խնդիրները¹:

¹ Հարկ է նկատել, որ զեկույցի կապակցությամբ իրենց դիտարկումներն են արել Անվտանգության ոլորտի կառավարման ժնկյան կենտրոնի (DCAF) փորձագետները (Dr. Hans-Jakob Schindler, Գերմանիա, David Watson, Մեծ Բրիտանիա, Dragan Lozancic , Խորվաթիա, Dr Teodora Fuior, DCAF աշխատակից), որոնք հաշվի են առնվել և անհրաժեշտության դեպքում ներառվել են զեկույցում: Դիտարկումները զեկույցում կմատնանշվեն իբրև “ըստ DCAF փորձագետների”:

ԳԼՈՒԽ 1.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԸ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների կազմակերպական կառուցվածքի, ենթակայության և վերջինիս գործունեության նկատմամբ վերահսկողությանն առնչվող հարցերի իրավակարգավորումներն ամրագրված են ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, այնպես էլ ելակետային մի շարք նորմատիվ-իրավական ակտերով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության Վարչապետի (այսուհետ նաև՝ **Վարչապետ**) կողմից «Ազգային անվտանգության ծառայության կանոնադրության և կառուցվածքը հաստատելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ **Որոշում**), «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, «Հատուկ պետական պաշտպանությանն ենթակա անձանց անվտանգության ապահովման» մասին ՀՀ օրենքի, «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման» ուղեցույցում առկա իրավակարգավորումները ազգային անվտանգության մարմինների ձևավորման, կառուցվածքի, համակարգի, դրա ղեկավարման և կառավարման, ազգային անվտանգության մարմինների նկատմամբ վերահսկողության տեսանկյունից հիմնականում, հակիրճ հանգում են հետևյալին.

- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմված է կենտրոնական և մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, պետական պահպանության ծառայությունից,

հետախուզական², հակահետախուզական³, ռազմական հակահետախուզության և քննչական մարմիններից, ուսումնական կենտրոններից, հատուկ և այլ ստորաբաժանումներից: Ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ նաև՝ ԱԱԾ) Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է հինգ հիմնական գործունեություն՝ հետախուզական գործունեություն, հակահետախուզական գործունեություն, ռազմական հակահետախուզական գործունեություն, պետական սահմանի պահպանություն և պայքար հանցագործությունների դեմ⁴: Մի կառույցի ներքո, փաստորեն, կենտրոնացած են գործառույթներ, որոնք արևմտյան ժողովրդավարության երկրներում, որպես կանոն, իրականացնում են տարբեր մարմիններ (ասենք հետախուզությունը և հակահետախուզությունը հաճախ իրականացնում են ազգային անվտանգության տարբեր գործակալություններ): Նմանապես, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ Ազգային անվտանգության ծառայությունը մի կողմից անվտանգության սպառնալիքները

² Հետախուզական գործունեությունը, այդ թվում արտաքին հետախուզությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկություններ ստանալուն և պետության անվտանգության հիմքերն ամրապնդելուն:

³ Հակահետախուզական գործունեության հիմքերը սահմանվում են և կարող են փոփոխվել օրենքով (այս պահին թվով հինգն են՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դեմ ուղղված օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, առանձին անձանց հետախուզական գործունեության մասին տեղեկությունների առկայությունը; պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովման անհրաժեշտությունը; ազգային անվտանգության մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց ուսումնասիրման (ստուգման) անհրաժեշտությունը; ներքին անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և այլն), իսկ հակահետախուզական գործունեություն իրականացնելիս գաղտնի մեթոդների և միջոցների օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գերատեսչական ակտերով:

⁴ Հանցավորության դեմ պայքարի շրջանակում ազգային անվտանգության մարմիններն իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, կատարում են հետաքննություն և նախաքննություն՝ ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը:

Հարկ է նկատել, որ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, հարկային մարմինները, մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով, քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում:

բացահայտելու նպատակով վերլուծում է ընդհանրական տեղեկատվությունը, մյուս կողմից ԱԱԾ-ն իրականացնում է կոնկրետ հանցագործության կապակցությամբ օպերատիվ-հետախուզական գործունեություն և կոնկրետ հանցանքի փաստով իրականացնում քննություն: Այլ կերպ ասած, ազգային անվտանգության մարմինները ոչ միայն ստանում, մշակում և վերլուծում են Հայաստանի Հանրապետության անվտանգությանը սպառնացող վտանգի մասին տեղեկատվությունը, կանխատեսում են դրա վտանգը, այլև իրականացվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց նպատակն է նաև հանցագործությունների և հանցանք կատարող անձանց հայտնաբերումը, քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը⁵:

- Ազգային անվտանգության ծառայությունը Վարչապետին ենթակա մարմին է: Ազգային անվտանգության ծառայության կառավարումը իրականացնում է Վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ Ազգային անվտանգության ծառայության տնօրենը: Այս կապակցությամբ, Որոշումը սահմանում է, որ Վարչապետը մշակում և իրականացնում է ազգային անվտանգության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների կառավարումը:
- Ազգային անվտանգության մարմինների հիմնական կադրերը զինծառայողներն են: Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը զինվորական ծառայություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Ազգային անվտանգության ծառայության տնօրենը հաշվետու է Վարչապետին:

⁵ Ազգային անվտանգության մարմինները հավաքում են նաև պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, այդ մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ, պետական մարմիններ աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ, քննարկում հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության սպառնացող հանգամանքների առկայությունը:

- Հայաստանի Հանրապետության կառավարությունում չկա որևէ նախարար, ուժային կառույցների ենթախումբ կամ բացակայում է այլ ձևաչափ, որը կորոշի մոտակա ժամանակահատվածում ազգային անվտանգության ծառայության գործունեության հիմնական և գերակա ուղղությունները: Ավելին, Կառավարության որևէ անդամ-նախարարին հաշվետու չէ Ազգային անվտանգության ծառայությունը: Արևմտյան ժողովրդավարական երկրներում, որտեղ, որպես կանոն, առկա են ազգային անվտանգության երկու և ավելի ծառայություններ (գործակալություններ), յուրաքանչյուրը հաշվետու է կառավարության անդամ հանդիսացող առանձին նախարարի (պետական նախարար, պաշտպանության նախարար, ներքին գործերի նախարար, արտաքին հարաբերությունների նախարար և այլն): Հաճախ, այդ նույն պատասխանատու-նախարարներից բաղկացած կառույցն է համատեղ որոշում ազգային անվտանգության ծառայության գործունեության հիմնական ուղղությունները: Հայաստանի Հանրապետությունում վիճակն այլ է: Համաձայն գործող օրենսդրության՝ Վարչապետն է հաստատում Ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը, սահմանում ազգային անվտանգության ծառայության գործունեության հիմնական ուղղությունները, իրականացնում է գործունեության վերահսկողություն, լսում ազգային անվտանգության ծառայության գործունեության մասին հաշվետվությունները, քննում գործունեության ստուգման արդյունքները, հաստատում տարեկան հաշվեկշիռը:
- Ազգային անվտանգության ծառայության տնօրենին նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Վարչապետի առաջարկությամբ: Ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին ևս նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Վարչապետի առաջարկությամբ՝ ԱԱԾ տնօրենի միջնորդության հիման վրա:

- Վարչապետը նշանակում և ազատում է հետախուսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման (այսուհետ նաև՝ **ՕՀՄ**) անցկացումն ապահովող Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչության (այսուհետ՝ **Գլխավոր վարչություն**) պետին:
- Թեև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է, որ Ազգային անվտանգության ծառայության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սակայն իրական լծակներով օժտված է Վարչապետը: Ընդհուպ, Վարչապետին և միայն նրա հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ Ազգային անվտանգության մարմինները տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին կամ Վարչապետին և միայն նրա հանձնարարությամբ պետական կառավարման համակարգի և տարածքային կառավարման մարմիններին ԱԱԾ-ն իրազեկում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը սպառնացող վտանգի մասին⁶: Ավելին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Վարչապետին տարեկան հաշվետվություն է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ Գլխավոր վարչություն ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը, այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի

⁶ Ըստ DCAF փորձագետների նման կարգավորումը վկայում է ԱԱԾ մարմինների նկատմամբ վստահության պակասի մասին, երբ վերջիններս չեն կարող իրենք որոշել՝ երբ և ինչպիսի տեղեկատվություն պետք է տրամադրվի այլ մարմիններին: Այս սահմանափակումները համահունչ չեն ոլորտի կառավարման լավագույն փորձի հետ:

որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել, ինչպես նաև այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգում չի գործում, ասենք, MIS⁷-ի օրինակով, տնօրենների խորհուրդ կամ որևէ այլ ձևաչափով կառույց, որը բաղկացած կլիներ ոլորտի պրոֆեսիոնալներից և «կոլեկտիվ պատասխանատվություն» կկրեր ԱԱԾ առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված մեթոդների և եղանակների ընտրության համար:
- Ազգային անվտանգության մարմինների նկատմամբ վերահսկողության վերաբերյալ առկա է երկու իրավակարգավորում: Առաջին. ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Երկրորդ. սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, կապված իրենց պատգամավորական գործունեության իրականացման հետ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության մարմինների գործունեության մասին: Ազգային անվտանգության ծառայության նկատմամբ իրականացվող խորհրդարանական վերահսկողության հետ կապված հարկ է նկատել, որ Կառավարության կազմում ազգային անվտանգության մարմինների գործունեության համար քաղաքական պատասխանատվություն կրող նախարարի բացակայությունը առնվազն թուլացնում է Ազգային անվտանգության ծառայության հաշվետվողականության մակարդակը Ազգային ժողովին: Ավելին, հստակ

⁷ Մեծ Բրիտանիայի հակահետախուզական և անվտանգության գործակալություն:

սահմանված չեն պատգամավորներին պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին հասանելիություն տրամադրելու կարգը և սկզբունքները: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված չի և Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովին (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) կից չի գործում մասնագիտական որևէ կառույց, որը կաջակցեր Հանձնաժողովին իրականացնել ազգային անվտանգության գործունեության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն:

- «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը հստակ չի սահմանում գաղտնագրման իրավական հիմքը, չնախատեսելով «վնասի թեստի» (harm test), «իմանալու պետքության» (need to know) սկզբունքի իրացման հստակ մեխանիզմներ: Այս օրենքով սահմանված է, որ Կառավարությունն է մշակում և հաստատում պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը: Մինչդեռ անհրաժեշտ է ոչ թե առաջնորդվել կոնկրետ ոլորտով, որի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է ճանաչվել գաղտնիք, այլ պետք է գնահատել, հստակ սահմանված չափանիշներից ելնելով, տեղեկատվության հրապարակման արդյունքում հնարավոր հասցվելիք վնասի բնույթը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չեն գաղտնի տեղեկատվությանը հասանելիությունը մերժելու որոշումների բողոքարկման հնարավորություն, բացակայում է Եվրամիության երկրներում այսօր արդեն լայնորեն կիրառվող անձին հասանելիություն տրամադրելու վկայագրի ինստիտուտն առ այն, որ տվյալ անձն իրավասու է հասանելիություն ունենալ գաղտնի տեղեկատվության նաև այլ ոլորտներում, եթե հիմնավորի այդ տեղեկատվությանը ծանոթանալու անհրաժեշտությունը: Նմանապես,

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բացակայում է ընկերությունների արդյունաբերական հավաստագրման ինստիտուտը⁸:

⁸ Արդյունաբերական հավաստագրումը ենթադրում է, որ կոնկրետ ձեռնարկությունը իրավունք ունի մասնակցելու գնումների, մատուցել ծառայություններ, կատարել աշխատանքներ, քանի որ բավարարում է գաղտնի տեղեկատվության հետ շփվելու ռեժիմին:

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԺԻՉ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՍԲ

«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության և պետության անվտանգությունը: Պետության ազգային անվտանգության ընդհանուր ըմբռնումը անհրաժեշտաբար պահանջում է դրա բոլոր բաղկացուցիչների՝ պաշտպանական, տնտեսական, սոցիալական, հոգևոր և մյուս բոլոր հարաբերությունների ներառականություն: Անվտանգության ապահովման մեխանիզմները և եղանակները ժամանակի ընթացքում կատարելագործվում և փոփոխվում են, ինչն իր ազդեցությունը պետք է ունենա նաև անվտանգությունն ապահովող ծառայությունների կազմակերպական կառուցվածքի և ճյուղային գործառույթային բարեփոխումների վրա: Դա կապված է հատկապես ներկայումս հասարակության վերափոխման նորարարական գործընթացներով, ինչի պայմաններում անվտանգության ռիսկերի տեսակարար կշիռը մեծանում է: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն հանգամանքին, որ արդի հասարակությունում գլոբալ տեղեկատվական-հաղորդակցային միջավայրը, հաղորդակցության զանգվածային, այդ թվում՝ նոր սերնդի միջոցները առաջացնում են որոշակի ռիսկեր:

Հարկ է նկատել, որ անվտանգության մարմինների կառուցվածքի և վերահսկողության լծակների սահմանման, ինչպես նաև գործառույթային բովանդակությունը որոշելիս չի իրականացվել կամ իրականացվում խորը և համալիր վերլուծություններ, տեղեկատվության անվտանգության ապահովման ռազմավարական փաստաթղթերի ընդունման գործում չի ապահովվել կամ չի ապահովվում իշխանության ճյուղերի բարձր մասնակցայնությունը: Ավելին, Հայաստանի Հանրապետությունում ակնհայտորեն խաթարված է

ռազմավարական փաստաթղթերի և այլ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքի տրամաբանությունը: Մասնավորապես, ազգային անվտանգությանն առնչվող գլխավոր փաստաթուղթը՝ ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, իսկ դրանից բխող օրենսդրական ակտերը՝ Ազգային ժողովի կողմից, ինչպես օրինակ աշխարհագրի վերաբերյալ «Պաշտպանության մասին» օրենքում Ազգային ժողովի կողմից վերջերս ընդունված փոփոխությունները: Մինչդեռ ռազմավարությունները, որպես հիմնական իրավական փաստաթուղթ, պետք է ընդունվեն հանրային լայն մասնակցայնության և իրավական առավել բարձր ուժ հաղորդող մարմնի կողմից, ինչից կբխեցվեն ի կատարումն դրա այլ իրավական ակտեր:

Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացները և աննախադեպ թափ ստացած համահարթեցումը, երբ պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, անվտանգային կանխարգելիչ ինստիտուտների կատարելագործումը դառնում է հրամայական: Ակնհայտ է, որ 21-րդ դարի տեղեկատվական դարաշրջանում պետությունների միջև տեղի ունեցող հակամարտությունները հաճախ շեղվում են ավանդական ռազմական բնույթից և ստանում են բոլորովին նոր ձև ու բովանդակություն՝ տեղեկատվական, հոգեբանական, տնտեսական և տարատեսակ այլ պատերազմների ձևով, ինչն ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից բոլորովին նոր խնդիրներ է առաջ քաշում: Առավել կարևորվում է ազգային անվտանգության կանխարգելիչ գործառույթի իրականացումը, ինչը պահանջում է համալիր վերլուծական աշխատանք, որն այսօր իրացվում է անվտանգությունն ապահովող ուղեղային կենտրոնների կողմից:

Դասական առումով Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ նաև՝ ԱՄՆ) պաշտպանության նախարարության ռազմական և հատուկ տերմինների բառարանում «ազգային անվտանգությունը» սահմանվում է՝ որպես հավաքական տերմին, որն ընդգրկում է ԱՄՆ ազգային պաշտպանությունը և արտաքին հարաբերությունները նպատակ ունենալով ձեռք բերել

ա. այլ պետության կամ պետությունների խմբի նկատմամբ ռազմական կամ պաշտպանական առավելություն,

բ. նպաստավոր դիրք արտաքին հարաբերություններում,

գ. պաշտպանական այնպիսի իրավիճակ, որն ունակ կլինի հաջողությամբ դիմագրավել ներքին և արտաքին թշանամական գործողությունները⁹:

Այս եզրույթը լայնորեն սկսեց կիրառվել 1947 թվականից, երբ հուլիսի 26-ին ԱՄՆ-ում ընդունվեց «Ազգային անվտանգության մասին» օրենքը: 1947թ.-ից մինչև սառը պատերազմի ավարտը ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերում «Ազգային անվտանգությունը» դիտարկվում էր առավելապես արտաքին անվտանգության և պաշտպանունակության բարձրացման համատեքստում, առավելություն տալով ազգային անվտանգության ապահովման կոշտ և սարսափազդու մեթոդներին, զինատեսակների քարոզին, մինչդեռ Խորհրդային Միության փլուզումից հետո սկսեցին գերակայել փափուկ ներազդեցության գործիքակազմը և ներքին անվտանգության ապահովման մեխանիզմների այնպիսի համադրումը, որի արդյունքում անվտանգության ուղեղային կենտրոնների ձևավորումը մղվեց առաջնային պլան, առաջ քաշվեցին տնտեսական, էկոլոգիական, էներգետիկ անվտանգության հայեցակարգերը՝ որպես ազգային անվտանգությունն ապահովող հայեցակարգային փաստաթղթեր¹⁰:

Կարող ենք առանձնացնել ազգային անվտանգության ապահովման համակարգերի հետևյալ պատմական տիպերը.

⁹ Dictionary of Military and Associated Terms. Department of Defense. Joint publication 1-02, 8 November 2010 (As amended through 15 February 2016), p. 162, այցելել է կայքը https://fas.org/irp/doddir/dod/jp1_02.pdf

¹⁰ Ulman R., Redefining security, International security. Vol 8, N1., pp 129-153.

- Պատժիչ (ռեպրեսիվ), որը կողմնորոշված է թշնամիների որոնմանը, ճնշմանը, մեկուսացմանը, վտարմանը և ոչնչացմանը,
- Պահպանիչ-ուժային, որն ուղղված է իշխող վերնախավի և քաղաքական ռեժիմի անվտանգության ապահովմանը, որն իր հերթին հենված է ուժի վրա և կիրառում է ճկուն միջոցներ՝ կաշառում, խաբեբայություն, կեղծ ընդդիմություն և այլն,
- Ժողովրդավարական, որը հիմնված է ժողովրդավարական պետության օրենսդրության վրա, ինչը ենթադրում է անվտանգության ապահովման առավելապես ոչ ուժային մեթոդներ:

Առաջին երկու տիպերը բնորոշ են առավելապես ավտորիտար ռեժիմներով պետություններին: Ժողովրդավարական պետություններին բնորոշ է անվտանգության ապահովման ոլորտում գործող այնպիսի մարմիններ, որոնք երկրի ղեկավարությանն ապահովում են հատուկ քաղաքական տեղեկատվությամբ, օգնում են մշակել արդյունավետ քայլեր՝ ուղղված այլ պետությունների և թշնամաբար տրամադրված կառույցների կողմից ձեռնարկվող հետախուզական և ընդհատակյա աշխատանքների խափանմանն ու դիմագրավմանը: Ամբողջատիրական համակարգից ժողովրդավարականին անցման փուլում գտնվող երկրներին հաճախ բնորոշ են իշխանության և անվտանգության այնպիսի մարմիններ, որոնք լինելով պետական կառավարման համակարգի մասը, իրականացնում են այլ պետական կառույցներին պարտադիր խորհրդատվություն տալու, դրանց գործունեության վրա հսկողություն իրականացնելու գործառույթ, այդ թվում՝ կադրային հարցեր, արտերկրյա գործուղումներ և այլն: 21-րդ դարի հարավփոփոխ աշխարհում անվտանգության ոլորտում ապագայի կանխատեսման, պետության գործունեության տարբեր ոլորտներին վերաբերող արտաքին և ներքին քաղաքականության մշակման գործում առանցքային նշանակություն ունեն ուղեղային կենտրոնները: Անվտանգության մարմինների պրոֆեսիոնալ աշխատանքի ապահովման կարևորագույն գրավականներից մեկը ուղեղային կենտրոնների հետ համադրված աշխատանքն է: Նրանք իրականացնում են գործնական քաղաքական

փորձաքննություն, պատրաստում են վերլուծական նյութեր և հիմնարար աշխատություններ: Ինտելեկտուալ արտադրանքի բոլոր այս տեսակները ձևավորում են անհրաժեշտ նախադրյալներ գլոբալ գործընթացների ռազմավարական բովանդակությունն ընկալելու համար, քանզի այն հիմնված է աշխարհում քաղաքականության և տնտեսության ոլորտում փոփոխությունների գործընթացներում քաղաքական և սոցիալ-տնտեսական ցանկալի արդյունքների հասնելու վրա: Դա է ուղեղային կենտրոնների և ակադեմիական հետազոտությունների գործունեության արդյունքների հիմնական տարբերությունը: Հարկ է նշել, որ անվտանգության մարմինների և ուղեղային կենտրոնների համակարգված գործակցությունը սկսվել է երկրորդ աշխարհամարտից հետո, երբ ձևավորվեց համակարգ-կազմակերպություններ, որոնց խնդիրը և հետազոտական առարկայական շրջանակը հանգում է պետության, հասարակության արտաքին և ներքին քաղաքականության, դրա մշակման և իրականացման վերաբերյալ բազմաոլորտ հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Ընդ որում, հարկ է նշել, որ ուղեղային կենտրոնների համակարգաստեղծ աշխատանքի արդյունք պետք է համարել տարբեր պետություններում անվտանգության մարմինների կազմակերպական առումով դիվեսիֆիկացված գործունեությունը կամ այլ կերպ ասած՝ վերջիններիս գործունեությունը տարբեր պետական մարմիններում և առաջնային կերպով՝ իրավապահների համակարգում: Առաջատար ուղեղային կենտրոնների շարքում, որոնք նպաստում են անվտանգության մարմինների ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորմանը և զարգացմանը, կարելի է առանձնացնել ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Շվեդիայի ուղեղային կենտրոնները:

Վերոնշյալի հետ կապված անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանել ազգային անվտանգության ապահովման կոշտ և փափուկ գործիքակազմերի տարբերությունները: Կոշտ գործիքակազմի կիրառության պայմաններում պետությունները առաջնային գործոն են դիտարկում ռազմական ուժի ցուցադրումը, դրա համեմատական առավելությունների քարոզը, ընդ որում՝ չխուսափելով դրա կիրառումը: Փափուկ ուժի քաղաքականությունն առավելապես

շեշտադրվում է բալանսավորված ուղեղային կենտրոնների աշխատանքով, ինչպես նաև ստրատեգիական զինատեսակների չեզոք կիրառությամբ (օրինակ՝ ստրատեգիական զինատեսակների ցուցադրում, պետությունների կողմից միջուկային պոտենցիալների ցուցադրում): Ուղեղային կենտրոնների նպատակը պետության անվտանգային պոտենցիալի նշանակետային կիրառությունն է և անվտանգային ներուժի չհաշվարկված և ոչ դիպուկ կիրառության բացառումը: Նրանք միտված են նաև բարեկամական և հակառակորդ դիտարկվող պետությունների հասարակությունների նկատմամբ ազդեցության գործոնները հաշվառելուն ու մեթոդաբանական ուղղությունների մշակմանը: Այս ամենը ենթադրում է համալիր վերլուծական աշխատանք:

Պետության ազգային անվտանգության ապահովման հիմնական ռազմավարական ուղղություններն ամրագրվում են ռազմավարական փաստաթղթերում և դրանց հիման վրա ընդունվող իրավական ակտերում, մշակվում են նաև ռազմական և պաշտպանական բնագավառի և անվտանգային ճյուղային ռազմավարությունները: Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության ապահովման, ուստի նաև ազգային անվտանգության մարմինների համակարգի ձևավորման վերաբերյալ առկա պատկերացումներում, ըստ էության, չի գործում պետության անվտանգության համար պատասխանատու կոլեգիալ մարմնի՝ կոնկրետ դեպքում Անվտանգության խորհրդի (այսուհետ նաև՝ **ԱԽ**)¹¹ կողմից ազգային անվտանգության մարմինների աշխատանքը համակարգելու տրամաբանությունը: Ազգային անվտանգության ապահովման տրամաբանության մեջ չի գործում նաև ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերը ԱԽ կողմից մշակելու, դրանք հանրային մասնակցայնության բարձր մակարդակով՝ գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների կողմից համատեղ քննարկելու և ընդունելու մոտեցումները, ինչպես նաև դրանց հիման վրա ազգային անվտանգության ճյուղային կառավարման

¹¹ Որպես այդպիսի մարմին կարող է հանդես գալ նաև անվտանգության ոլորտի այլ սահմանադրական մարմին:

մարմինների¹² համակարգի գործունեության սկզբունքները ընդունելու անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետությունում դժբախտաբար ձևավորված չեն նաև ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվությունը տարբեր բնագավառներում վերլուծող և գտող ուղեղային համակարգ-կենտրոններ:

Չափազանց կարևոր նշանակություն ունի ազգային անվտանգության ոլորտի դոկտրինալ փաստաթղթերի կամ հայեցակարգերի ընդունման և դրան հետևող փաստաթղթերի հիերարխիկ կառուցվածքի, դրանց ուղերձների և վերահաստատումների խնդիրը, որի միջոցով պարտադիր կհետևեն ազգային անվտանգության ճյուղային մարմինների ընդունած ներքին փաստաթղթերը: Ազգային անվտանգության ոլորտի այդ փաստաթղթերը ներկայացվում են գործադիր իշխանության ղեկավարի կողմից, սակայն դրանց ներկայացման համար ուղերձով գործադիր իշխանության ներկայացուցիչները պետք է հանդես գան օրենսդիր մարմիններում և իսկ որոշ դեպքերում հաստատվեն օրենսդիր մարմնի կողմից¹³:

Ազգային անվտանգության ոլորտին առնչվող փաստաթղթերի ընդունմանը նախորդում են վերլուծական աշխատանքներ զինվորական, արտաքին գերատեսչությունների և հետախուզական ծառայությունների մասնակցությամբ: ԱՄՆ-ում նախագահին առընթեր բարձրագույն խորհրդատվական մարմինը՝ Ազգային անվտանգության խորհուրդը, մշակում է ազգային անվտանգության հիմնական դոկտրինալ ռազմավարությունները, մշակում է արտաքին, պաշտպանական անվտանգության միջանկյալ և օպերատիվ միջամտություն պահանջող իրավիճակային հանձնարարականներ, դրանով իսկ ապահովելով ընդհանուր ռազմավարության ղեկավարումը: Մայիտակ տանը ԱԱԽ աշխատանքները համակարգում է ազգային անվտանգության գծով նախագահի օգնականը՝ ԱԱԽ գործադիր քարտուղարը (նրան են ենթարկվում նախագահի

¹² Ազգային անվտանգության ճյուղային կառավարման մարմիններն են դիտարկվում հետախուզական և հակահետախուզական գործառույթ իրականացնող մարմինները:

¹³ Ճյուղային մարմինների քաղաքականության ամբողջական կամ մասնակի դրվագներ կարող են ենթարկվել գաղտնիության ռեժիմին և դրանց ընդունման գործընթացում փակ քննարկումներ կարող են կազմակերպվել կառավարության անդամների և օրենսդիր մարմնի համապատասխան հանձնաժողովների միջև:

կողմից նշանակվող չորս ճյուղային նախարարների՝ արդարադատություն, էներգետիկա, պաշտպանություն, ֆինանսների ազգային անվտանգության գծով օգնականներ) և իրավիճակային վերլուծության խմբի տնօրենը¹⁴:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունն ապահովող մարմինների աշխատանքների հիմքում ընկած չեն ուղեղային կենտրոնների կողմից իրականացվող վերլուծություններ, բացակայում են համակարգային մոտեցումներ: Դեմոգրաֆիական խնդիրները, որոնք ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հրատապ լուծում պահանջողներից է, անհրաժեշտաբար պահանջում են տնտեսական, սոցիալական անվտանգության ապահովում: Ակնհայտ է, որ տնտեսական անվտանգության բաղադրիչը թերագնահատելն անհնար է, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանդեպ հարևան Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող ագրեսիվ քաղաքականությունը, որի նպատակը Հայաստանի Հանրապետության մեկուսացումն է՝ տարածաշրջանային ենթակառուցվածքներից Հայաստանի Հանրապետությունը կտրելու, տնտեսական դիմադրողականությունը քայքայելու, դրանով իսկ հասարակության իմունիտետը թուլացնելու համար: Այս առումով կարևոր է Հայաստանը տնտեսական մեկուսացումից դուրս բերելուն միտված ծրագրերի իրականացումը, ինչը կոռուպցիոն տարբեր գործընթացների արդյունքում ներկայումս մնում է չլուծված, չնայած հանդիսանում է ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչը: Իբրև օրինակ կարող ենք ներկայացնել Հյուսիս-հարավ ծրագիրը, որը սկսվել է 2012թվ-ին և պետք է ավարտվեր 2019թ.-ին: Այն հանդիսանալու է հարավից Իրանի իսլամական հանրապետությունը և հյուսիսից Վրաստանը կապող, հսկայական տարանցման պոտենցիալ պարունակող, բեռնափոխադրումների ինքնարժեքը մինչև 30%-ով իջեցնող ռազմաքաղաքական ծրագիր: Այն ունի ոչ միայն տարածաշրջանային, այլև հսկայական աշխարհաքաղաքական նշանակություն, քանզի Պարսից ծոցի երկրները սևծովյան տարածաշրջանին կապող ենթակառուցվածք է: Ի հակադրություն քննարկվող

¹⁴ Իրավիճակային խմբի առաքելությունը ազգային անվտանգության համար տարերայնորեն առաջացած խնդիրներով վերլուծական աշխատանքն է:

նախագծի Ադրբեջանը և Թուրքիան վերջին տարիներին արդեն իսկ ավարտին են հասցրել Հայաստանը տարածաշրջանային տնտեսական գործընթացներից մեկուսացնող ծրագրեր, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Կարս, Ռեշդ-Աստարա երկաթգծային հանգույցների կառուցումը, որոնք ուղղակիորեն հանդիսանում են «Հայաստանի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված գործարքներ»։ Հարկ է նկատել, որ անգամ 2018թ. հեղափոխությունից հետո քննարկվող ծրագրի վերաբերյալ իրականացված բացահայտումները վկայում են պետության անթույլատրելի վերաբերմունքը պետության ազգային անվտանգության համար գերկարևոր ծրագրերի նկատմամբ։ Նման քաղաքականությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում անվտանգության ապահովումը դեռևս չի դիտարկվում այն ապահովող ինստիտուցիոնալ համակարգերի ձևավորման գործընթաց, այլ իրականացվում է բացառապես հետախուզական, հակահետախուզական և հանցագործությունների դեմ պայքարի լիազորությունների իրացմամբ։ Նման քաղաքականությունը կարող է հանգեցնել անվտանգային միջավայրի անհամաչափ ընկալման՝ պայմանավորված ինստիտուցիոնալ համակարգերի բացակայությամբ։ Համեմատության համար նշենք, որ Թուրքիայի և Ադրբեջանի ազգային անվտանգության ռազմավարություններում մատնանշված են տարածքային ենթակառուցվածքների զարգացումը ըստ տարիների, որոնց դիտարկումը ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության մեկուսացման խորացման քաղաքականության ամրագրումը վերոնշյալ պետությունների կողմից։ Այս առումով 2020 թվ-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն առավելապես հիշեցնում է հռչակագրի, թեև այն պետք է պարունակեր բոլոր անհրաժեշտ քայլերը և միջոցառումները, որոնք անհրաժեշտաբար պետք է ձեռնարկվեն Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգերը ձևավորելու ուղղությամբ։ Օրինակ, անվտանգության ապահովման բաղկացուցիչ հանդիսացող տնտեսական անվտանգությունն ապահովելու շրջանակներում ռազմավարությունը նշել է տնտեսական մրցակցության ապահովումը և այլն։ Բայց թե ինչ կոնկրետ քայլեր պետք է իրականացվեն նշված նպատակներին հասնելու

համար, ռազմավարությունը չի մանրամասնում: Նույնը վերաբերում է նաև այլ ոլորտներին, որոնք չեն պարունակում կոնկրետ գործողություններ, իսկ իրավական անվտանգության մասին ռազմավարությունն ուղղակի լռում է: Ազգային անվտանգությանը առավել համապարփակ բովանդակություն տալու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել Անվտանգության խորհրդի կազմը՝ ներգրավելով ազգային անվտանգության մարմինների հետախուզական և հակահետախուզական ստորաբաժանումների, պետության ֆինանսական և էներգետիկ համակարգերի պատասխանատու ղեկավարների կազմը¹⁵: Ընդ որում, ճգնաժամերի կամ առավել կարևոր հարցերի վերաբերյալ քննարկումներին կարող են հրավիրվել նաև Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի անդամներ¹⁶:

¹⁵ Վերջնական կազմի հարցը որոշել քննարկումների արդյունքում:

¹⁶ Ըստ DCAF փորձագետների պատգամավորները չպետք է լինեն ներգրավված Անվտանգության խորհրդում մշտական հիմունքներով, քանի որ Անվտանգության խորհուրդը պետք է լինի հաշվետու խորհրդարանին: Նրանք կարող են հրավիրվել ըստ անհրաժեշտության:

ԳԼՈՒԽ 3.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Արխիվային տվյալները թեև սուղ են, բայց հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգի անբաժանելի մասն են կազմել հատուկ ծառայությունները: 1918-20թթ. այդ կարևոր կառույցը չհասցրեց դառնալ լիովին ինքնուրույն ծառայություն, այլ գործեց որպես Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժանմունք: Խորհրդային պետանվտանգության մարմինները, դրանց կազմում նաև Խորհրդային Հայաստանի համապատասխան ստորաբաժանումները պարբերաբար վերածվում էին պատժիչ քաղաքականության գործիքի:

Հայաստանի անվտանգության մարմինների պատմությունն իր բոլոր կտրուկ շրջադարձերով նաև երրորդ հանրապետության պատմության ընթացքում պետք է ցուցաբերի անհրաժեշտ կամք՝ ժողովրդավարական պետության սկզբունքներին հարիր անվտանգության մարմիններ և համակարգեր ձևավորելու համար: Անշուշտ, անվտանգության ապահովման հիմնական գործող մարմինը Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության ծառայությունն է, սակայն պետության անվտանգության հարցում այլ մարմինների հետ պատշաճ մակարդակի փոխգործակցությունը խիստ անհրաժեշտություն է, քանի որ այլ մարմինների կողմից տիրապետվող տեղեկատվական աղբյուրները կարող են էապես ներագդել անվտանգային մակարդակի բարձրացման վրա: Այս առումով թյուր է այն կարծիքը, որ Ազգային անվտանգության ծառայությունը տիրապետում է անհրաժեշտ բոլոր գործիքակազմին՝ պետության անվտանգությունը տարբեր ուղղություններում ապահովելու համար: Ուստի և չափազանց կարևոր է ինչպես ազգային անվտանգության սահմանումը, այնպես էլ դրանից բխող և այն ապահովող մարմինների կազմակերպական-կառուցվածքային, գործառութային և

դրանց իրականացման նկատմամբ վերահսկողական հիմնադրույթների ուսումնասիրությունը:

Անկախության հռչակումից հետո, 1991թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի և կազմի մասին» օրենքով ՊԱԿ-ը վերանվանվեց Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական վարչության: «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում ազգային անվտանգությունը բնորոշվում է որպես պետության և հասարակության այնպիսի կացություն, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից: Նշված ձևակերպումը Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի վերլուծության հետ համադրման արդյունքում բացահայտում է, որ հարկավոր է ազգային անվտանգության մարմինների, վերջինիս հետ կապված ինստիտուտների կայուն և հիմնարար աշխատանքների իրականացում, ազգային անվտանգության մարմինների կազմակերպական և կառուցվածքային էական վերափոխումներ, աշխատանքի կազմակերպման մեթոդաբանության արմատական փոփոխությունների իրականացում: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության անվտանգային ներկայիս միջավայրի վերոնշյալ բաղադրիչները առանձին դիտարկվել չեն կարող, և դրանց համադրությունը միայն հնարավորություն կտա համակողմանիորեն ապահովել պետության նպատակային և կայուն զարգացումը:

Հայաստանի երրորդ հանրապետության ազգային անվտանգությունն ապահովող պետական մարմինը տարբեր փուլերում գործել է կառուցվածքային տարբեր կարգավիճակներում, այդ թվում՝ Ազգային անվտանգության և ներքին գործերի նախարարության կարգավիճակում, սակայն բոլոր շրջափուլերում ենթակա է եղել գործադիր իշխանության ղեկավարին (մինչև 2015թ.

սահմանադրական փոփոխությունները՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին, դրանից հետո՝ Հայաստանի Հանրապետության Վարչապետին): Ազգային անվտանգության մարմինների կազմակերպական և կառուցվածքային հիմնախնդիրը առնչվում է նաև վերջինիս գործունեության նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացմանը: Ազգային անվտանգության մարմինների գործունեությունը հաշվետվողականության իմաստով դիտարկվում է կենտրոնացված համակարգի սկզբունքների պահպանմամբ, այդ թվում՝ որպես իրավապահ մարմին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության և դատական վերահսկողության շրջանակներում վերջիններիս կողմից իրականացվող լիազորություններով, իսկ վերահսկողական իմաստով՝ իշխանության միայն գործադիր ճյուղի կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների իրացմամբ: 2015թ. սահմանադրական փոփոխություններով խորհրդարանական հանրապետության կառավարման ձևին անցմամբ, այնուամենայնիվ, չձևավորվեցին իրավական նախադրյալներ ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ խորհրդարանական արդյունավետ վերահսկողության գործիքակազմն ապահովելու համար:

Հաջողված և արդյունավետ ազգային անվտանգության համակարգեր ձևավորում են այն պետությունները, որոնք ազգային անվտանգության ոլորտում կառուցել են իրավական պատշաճ բազա և ազգային անվտանգության մարմինների հիերարխիկ համակարգ՝ բարձրագույն ղեկավարման, ոլորտային համակարգման և ճյուղային կառավարման կայուն տրամաբանությամբ, ինչպես նաև այդ մարմինների գործունեության նկատմամբ արդյունավետ պառլամենտական և այլ վերահսկողական համակարգերի ամբողջական իրավակարգավորումներով: ՀՀ-ում դեռևս նման համակարգ կայացած չէ:

ՀՀ-ում, ինչպես արդեն նշվեց, ԱԱԾ-ն հանդիսանում է գործադիր իշխանությանը ենթակա մարմին և գործադիր իշխանությունից զատ հսկողական և վերահսկողական արդյունավետ մեխանիզմներ, մասնավորապես՝ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողության մասով Ազգային անվտանգության ծառայության դեպքում նախատեսված չեն: Մյուս կողմից

կառավարության որևէ անդամ քաղաքական պատասխանատվություն չի կրում Ազգային անվտանգության ծառայության գործունեության համար: Հայաստանի Հանրապետությունում Ազգային անվտանգության ծառայությունը Վարչապետին ենթակա մարմին է, որի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է կառավարությունը, կառավարումը՝ ՀՀ Վարչապետը, իսկ անմիջական ղեկավարը՝ ԱԱԾ ղեկավարը, ով Հայաստանի Հանրապետության Վարչապետի առաջարկով նշանակվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

Հարկ է նկատել, որ միայն վերջին երեք տարիների ընթացքում մի քանի անգամ փոխվեց Ազգային անվտանգության ծառայության ղեկավարը: Անհարժեշտ է դիտարկել Ազգային անվտանգության ծառայության ղեկավարին որոշակի ժամկետով Ազգային ժողովի կողմից նշանակելու/ընտրելու/հաստատելու հնարավորությունը, ինչը կապահովի նաև այս կառույցի անկախությունը գործադիր իշխանությունից: Ավելին, Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը զինվորական ծառայություն է, մինչդեռ արևմտյան աշխարհում հետախուզության և հակահետախուզության ծառայողները քաղաքացիական անձինք են և սա գլխավորապես պայմանավորված է նաև ազգային անվտանգության առջև ծառայած նոր մարտահրավերներով, առավելապես ուղեղային կենտրոնների ներդրմամբ: Հարկ է նկատել, որ չափազանց կարևոր է ազգային անվտանգության ծառայություն անցնելու չափանիշների սահմանումը, աշխատակիցների որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի առկայությունը, թարմացումը, ինչպես նաև տեխնիկական բարձր մակարդակով հագեցվածության ապահովումը: Խորհրդարանական վերահսկողության միջոցով խորհրդարանը պետք է մշտապես հետևի, հսկի սահմանված չափանիշների ապահովման, աշխատակիցների կատարելագործման ծրագրերի թարմացմանն ուղղությամբ պատշաճ աշխատանքների կատարմանը:

Ազգային անվտանգության մարմինների գործունեության կարևոր սկզբունքներից մեկը դրանց տարանջատումն է ըստ գործառույթների և, ըստ այդմ, նաև ըստ մարմինների: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում

ազգային անվտանգության մարմինների գործառույթների ճյուղային մարմիններն են հանդիսանում Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայությունը, Գլխավոր հետախուզական ծառայությունը: ԱՄՆ-ում հետախուզական ծառայություններն են Կենտրոնական հետախուզական ծառայությունը, որը համակարգում է ԱՄՆ հետախուզական տվյալները, մշակում տեղեկատվական բազաներ, իրականացնում է հետախուզության համար անհրաժեշտ մեթոդաբանական նախապատրաստություն: Այլ կերպ ասած այն հանդիսանում է համակարգային հետախուզական ծառայություն: Մյուս հետախուզական ծառայությունը՝ ազգային անվտանգության գործակալությունն իր հետախուզական գործառույթն իրականացնում է առավել գաղտնիացված մեթոդաբանության կիրառմամբ և առնչվում է հաղորդակցումների լրտեսման ոլորտին: Գործառույթների և մարմինների նման տարանջատումը հնարավորություն է տալիս պրոֆեսիոնալ կարողությունները զարգացնել ըստ ազգային անվտանգության ապահովման ուղղությունների, ինչն իր հերթին ապահովում է նաև գործունեության մեթոդաբանության տարբերակում, բացառում է բոլոր լծակների կենտրոնացումը մեկ մարմնի ներքո, առաջանում է ազգային անվտանգության մարմինների միջև հորիզոնական բնույթի վերահսկողական լծակներ: Մյուս կողմից, պետք է նկատել, որ առավել խնդրահարույց է այս մարմինների միջև տեղեկատվությունը կիսելու մշակույթի ձևավորումը, առանձին ոլորտներում համատեղ գործելու անհրաժեշտության գիտակցումը: DCAF փորձագետները ևս մատնանշեցին, որ առկա են անվտանգության զարգացած համարգեր ունեցող փոքր երկրներ, որտեղ այս գործառույթները իրականացվում է մեկ մարմնի ներքո, փորձագետները առավելապես կարևորեցին ազգային անվտանգության մարմինների հաշվետվողականության իրական մեխանիզմների առկայությունը: Այլ կերպ ասած լավագույնը փորձը միանշանակ չի ենթադրում այս գործառույթների տարանջատում:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների գործունեության հիմնական ոլորտները տվյալ պահին հանգում են

հետախուզական, հակահետախուզական, իրավապահ գործունեության ուղղությանը, ինչպես նաև պետական սահմանի պահպանությանը:

Հետախուզություն. Հետախուզական գործունեությունը, այդ թվում՝ արտաքին հետախուզությունը, ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում իրականացվող գործունեությունն է՝ ուղղված ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկություններ ստանալուն և պետության անվտանգությանն ամրապնդելուն: Հետախուզական գործունեության իրականացման տեսանկյունից չափազանց կարևոր է համագործակցությունը գործադիր իշխանության այլ մարմինների հետ, որոնց իրավակարգավորումները նախատեսվում են ներքին օրենսդրությամբ և համատեղ ակտերով, ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների և Հայաստանի Հանրապետության ոստիկանության հատուկ ստորաբաժանումների փոխգործակցության վերաբերյալ համատեղ ակտերը, իսկ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության կարգավորումները կանխորոշված են միջազգային պայմանագրերով: Հետախուզական գործունեության իրականացման իրավական եղանակը օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացակարգն է, այդ թվում նաև գաղտնի մեթոդների և միջոցների օգտագործմամբ:

Հակահետախուզություն. Հակահետախուզական գործունեության հիմքերը սահմանվում են և կարող են փոփոխվել օրենքով: Այս պահին թվով հինգն են՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դեմ ուղղված օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, առանձին անձանց հետախուզական գործունեության մասին տեղեկությունների առկայությունը, պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության ապահովման անհրաժեշտությունը, ազգային անվտանգության մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց ուսումնասիրման (ստուգման) անհրաժեշտությունը, ներքին անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և այլն:

Ռազմական հակահետախուզություն. Ռազմական հակահետախուզական գործունեությունը ազգային անվտանգության մարմնի ռազմական հակահետախուզական մարմնի կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործերում, այլ գործերում և կազմավորումներում, ինչպես նաև դրանց կառավարման մարմիններում՝ իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունները բացահայտելու, կանխելու և խափանելու, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ներթափանցումից պաշտպանելու, ինչպես նաև մարտունակությունը և մարտական պատրաստությունը պահպանելիս հրամանատարությանն աջակցելու նպատակով:

Նախաքննական կամ իրավապահ գործունեություն. Հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ազգային անվտանգության մարմիններն իրականացնում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իրենց ենթակայությանը վերապահված հանցագործության տեսակներով հետաքննություն և նախաքննություն՝ դրանց իրացմանը նպաստելով նաև օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացմամբ:

Պետական սահմանի պահպանություն. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանությունն իրականացնում են սահմանապահ գործերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների հակահետախուզական գործունեությունը կարող է շոշափել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, քաղաքացիների բնակարանների անձեռնմխելիությունը: Մասնավորապես՝ ազգային անվտանգության մարմինները, հակահետախուզական գործունեության իրականացման համար դատարանի պահանջով ներկայացնում են հակահետախուզական գործունեության

իրականացման հիմքերին վերաբերող ծառայողական փաստաթղթեր (բացառությամբ օպերատիվ-ծառայողական փաստաթղթերի, որոնք տեղեկություններ են պարունակում ազգային անվտանգության մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձանց, ինչպես նաև հակահետախուզական գործունեության իրականացման կազմակերպման, գործելակերպի, մեթոդների և միջոցների մասին):

Հակահետախուզական գործունեության իրականացման իրավունքի վերաբերյալ դատարանի որոշումը և դրա ընդունման համար հիմք ծառայած նյութերը, օրենսդրությամբ սահմանված կարգով, պահվում են ազգային անվտանգության մարմիններում:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններին վերապահված վերոնշյալ գործունեության ուղղությունների որոշ մասը վիճելի է՝ գործառույթների արդյունավետ իրականացման տեսանկյունից և որոշ իմաստով անհարկի ծանրաբեռնում է ազգային անվտանգության մարմինների գործունեության ուղղվածությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հանցագործությունների դեմ պայքարին¹⁷: Չբացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից իրենց բուն գործունեության՝ հետախուզության, հակահետախուզության և ռազմական հակահետախուզության շրջանակներում իրականացվող գործողությունների ընթացքում հանցագործության դեպքերի բացահայտման և կանխման խնդրի կարևորությունը, միաժամանակ հարկ է նշել, որ ազգային անվտանգության մարմիններին նաև քննչական գործառույթի վերապահումն, ըստ էության, չի բխում այդ մարմնի՝ պետության անվտանգության ապահովման հիմնական գործառույթի իրականացման բովանդակությունից և որ ամենակարևորն է՝ արդյունավետությունից: Մասնավորապես, ազգային անվտանգության մարմինները մշակում և պետական համապատասխան մարմինների հետ համատեղ իրականացնում են միջոցառումներ, որոնք ուղղված են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն

¹⁷ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետ:

երևույթների բացահայտմանը: Կոռուպցայի դեմ պայքարը ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորելով հանդերձ, հարկ է նշել, որ այն նեղ իմաստով ազգային անվտանգության մարմինների բուն գործառույթը չէ և նման տրամաբանությամբ առաջնորդվելիս ազգային անվտանգության մարմինների իրավասությանը պետք է վերապահել նաև անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քննությունը, առողջապահության բնագավառում գործառույթներ և այլն: Կողմնորոշիչը պետք է լինի անվտանգության ապահովման նեղ և լայն մեկնաբանման հիմնադրույթները: Որպես օրինակ, հարկ է մատնանշել ԱՄՆ հետաքննությունների դաշնային ծառայության գործառույթը՝ նաև ազգային անվտանգությանն առնչվող հանցագործության դեպքերի քննության ուղղությամբ: Դրանք առնչվում են լրտեսության, պետական դավաճանության հանցագործության դեպքերով գործերի քննությանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի կողմից քննվող քրեական մի շարք գործերի բովանդակությունը նեղ առումով չի բխում ԱԱԾ գործառութային էությունից և պայմանավորված է բացառապես քննչական ենթակայության վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված կարգավորումներով, համաձայն որի ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի իրավասությանը վերապահված է հանցագործությունների լայն շրջանակի գործերի քննություն:

Այս առնչությամբ առաջարկվում է հետախուզական և հակահետախուզական ծառայություն իրականացնող ստորաբաժանումները տարանջատել համապատասխանաբար առանձին պետական մարմինների կարգավիճակով: Իրավապահ գործառութի իրականացումը անհրաժեշտ է սահմանափակել բացառապես ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով:

ԳԼՈՒԽ 4.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԳՈՐԾՈՂ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԵՎ ՀՄԿՈՂԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում կարող են իրականացվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնք դասակարգվում են երկու տեսակի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ուղղված կամ չուղղված ապացույցների ձեռք բերմանը: Այլ կերպ ասած, որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում (օրինակ՝ ներքին դիտում, արտաքին դիտում, օպերատիվ փորձարարություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, օպերատիվ ներդրում և այլն) ձեռք են բերվում ապացույցներ կոնկրետ հանցագործության քննության համատեքստում: Մինչդեռ, արևմտյան եվրոպական երկրներում այս երկու գործառնությունները տարբերակված են: Քրեական գործի հարուցման պարագայում քննիչը պետք է անձամբ իրականացնի քննչական գործողություններ, ասենք հարցաքննություն, որպեսզի ձեռք բերի ապացույց, այլ ոչ թե հանձնարարի իրականացնել «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը և արդյունքում ձեռք բերի ապացույց: Օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է իրականացվեն քննիչին ուղղորդելու նպատակով՝ թե ինչպիսի քննչական գործողություններ կատարվեն ապացույցներ ձեռք բերելու նպատակով, այլ ոչ թե փոխարինեն քննիչի գործունեությանը: Հաշվի անելով օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ապացույց ձեռք բերելու հնարավորությունը՝ օրենսդիրը սահմանել է, այնուամենայնիվ, կամայականությունների վերացմանն ուղղված մի շարք երաշխիքներ, որոնք հակիրճ հանգում են հետևյալին.

ա. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացվում է օրինականության, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա: Սա ենթադրում է, որ սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները պետք է իրականացվեն օրենսդրությամբ սահմանված ձևին համապատասխան, իսկ մարդու իրավունքների սահմանափակման դեպքերում պետք է պահպանվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջները: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանվում է առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կարգ: Օրինակ, «ներքին դիտումը» բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Նմանապես, «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը» կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա¹⁸: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է նաև, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով, իսկ տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ: Ահա, ՕՀՄ-ները պետք է իրականացվեն սահմանված պայմանների պահպանմամբ:

բ. Յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով կամ պատճառված վնասը քրեական օրենքով

¹⁸ «Կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով

օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը: Եթե, սակայն, առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ կամ ստացված նյութերով և փաստաթղթերով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք, ապա դրանք ենթակա են ոչնչացման անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

գ. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը Ազգային անվտանգության ծառայության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

դ. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները չպետք է վնաս պատճառեն մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

ե. Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը սույն օրենքով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

գ. Պետական մարմինները, կազմակերպությունները և քաղաքացիները օրենքով սահմանված կարգով, իրավունք ունեն պահանջել ազգային անվտանգության մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցում:

է. Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում են օրենքով և ենթարկվում իրենց անմիջական ղեկավարին: Հրաման կամ ցուցում ստանալու դեպքում օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է ստացած հրամանի կամ ցուցումի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հրամանը կամ ցուցումը տվողին կամ նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձին: Եթե ցուցում տվողը գրավոր հաստատում է տրված հրամանը կամ ցուցումը, ապա օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է դա կատարել, բացառությամբ, եթե դա կհանգեցնի օրենքով սահմանված քրեական պատասխանատվության: Օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի կողմից այդ հրամանի կամ ցուցումի կատարման համար պատասխանատվությունը կրում է դրանք գրավոր հաստատած անձը:

ը. Օրենքով նախատեսված հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

թ. Կամայականությունների բացառումը, երբ իրականացվում են միջոցառումներ կապված քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվության տրամադրման հետ: Նշված նյութերը և փաստաթղթերը տրամադրելը մերժվում է, եթե միայն առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ կամ երբ

դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք:

Ակնհայտ է, որ նշված երաշխիքներից որոշները գործնականում չեն պահպանվում: Ասենք, մեզ չհաջողվեց գտնել մեկ դեպք, երբ անձին տրվել է ազգային անվտանգության մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցում: Նմանապես, հարցումների արդյունքում չեն արձանագրվել դեպքեր այն մասին, որ օպերատիվ ստորաբաժանման որևէ աշխատակից երբևէ զեկուցել է ստացած հրամանի կամ ցուցումի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին ցուցումը տվողին կամ վերադասին: Այս երաշխիքներից, մասնավորապես՝ օրինականության, համաչափության և արդյունավետության սկզբունքների պահպանման նպատակով պետք է սահմանել խելամիտ դատախազական հսկողություն, դատական և խորհրդարանական վերահսկողություն, որոնց կանդրադառնանք ստորև: Նշված երաշխիքների և, առհասարակ, օրինականության սկզբունքի ապահովման համար խիստ կարևոր է ԱԱԾ աշխատակիցների համար բարեվարքության կանոնագրքերի սահմանումը, արդյունավետ ներքին վերահսկողության մեխանիզմների առկայությունը, ներքին և արտաքին բողոքների քննարկման կառուցակարգերի ներդրումը Ընդ որում, հնարավորության սահմաններում անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն հրապարակել, որպեսզի քաղաքացիները իրազեկվեն նման կառուցակարգերի մասին, դիմեն իրենց բողոքներով: Ինչ վերաբերում է դրանց արդյունավետությանը, ապա խորհրդարանական վերահսկողության միջոցով հնարավոր կլինի չափել առկա մեխանիզմների արդյունավետությունը:

4.1 ԴԱՏԱԽԱՁԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության մարմինների գործառնության ոլորտների ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ դրանց իրացման հիմնական եղանակը օպերատիվ-հետախուզական գործունեությունն է: Նշված գործողությունների իրականացման բնագավառը սերտորեն հատվում է մարդու իրավունքների և ազատությունների հետ կամ որ առավել ճիշտ է՝ դրանց սահմանափակման հետ, ուստի անհրաժեշտ է դրանք քննարկել հսկողության և վերահսկողության արդյունավետ համակարգերի ներդրման շրջանակում: Ազգային անվտանգության մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեությունը հանցավորության դեմ պայքարի ոլորտում դատավարական վերահսկողության առումով վերապահված է Հայաստանի Հանրապետության դատախազությանը: Այսինքն, ազգային անվտանգության մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական աշխատանքի նկատմամբ դատախազական հսկողության սահմանները վերաբերում են բացառապես հետաքննության և նախաքննության գործառնություններին: Մինչդեռ, ազգային անվտանգության մարմինների կողմից իրականացվող հետախուզական և հակահետախուզական գործունեության շրջանակներում դատախազական հսկողությունը չի կարող իրացվել, քանի որ քննարկվող գործառնության ոլորտները հետաքննական և նախաքննական դաշտում չեն: Քանի դեռ հետախուզությունը և հակահետախուզությունը չեն առնչվում հանցավորության հետ, դատախազությունը ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ հսկողական որևէ լիազորություն իրականացնել չի կարող: Այս առումով, հարկ է նշել, որ օպերատիվ-հետախուզական որոշ գործողություններ կարող են իրականացվել բացառապես դատական վերահսկողության շրջանակներում:

Իրավապահ գործառնության շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման ընթացքում օրինականության ապահովման տեսանկյունից դատախազական հսկողության մեխանիզմներն ըստ էության չեն կարող դիտարկվել լիարժեք՝ անօրինական գործողությունները կանխարգելելու

տեսանկյունից: Այսպես, քրեադատավարական առումով այս գործընթացի իրավակարգավորումներն ամրագրված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով: Մասնավորապես, Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները: Դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են ներկայացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Դատախազը պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների գաղտնիությունը: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Հարկ է նշել, որ ներկայումս պրակտիկայում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող և հատկապես ազգային անվտանգության մարմինների համակարգում, մարմինների գործունեությունը գտնվում է դատախազական հսկողության տիրույթից դուրս և դատախազների պահանջով այդ մարմինները շատ հաճախ մերժում են տեղեկատվության տրամադրումը՝ պատճառաբանելով տվյալների ձեռքբերման աղբյուրների գաղտնիության պահպանման հանգամանքը: Ավելին, ազգային անվտանգության

մարմինները տնօրինում են բացառիկ տեխնիկական հնարավորություններ, ինչն իր հերթին թույլ է տալիս վերահսկել տեղեկատվական տարբեր միջոցները, այդ թվում նաև՝ դատախազների աշխատանքը, ինչը միանշանակ հիմք է պնդելու այդ ծառայության նկատմամբ արտաքին վերահսկելիության ապահովման անհրաժեշտության մասին: Իշխանությունների տարանջատման և փոխզույգման սկզբունքը պահանջում է այս բնագավառում խորհրդարանական ակտիվ վերահսկողության իրականացում:

4.2. ԴՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հարկ է առանձնացնել դատական վերահսկողության բովանդակությունը բացահայտող հետևյալ իրավակարգավորումները.

- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում, տեխնիկական միջոցների օգտագործմամբ արտաքին դիտում (եթե անձը, ում նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը ողջամտորեն չէր կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին) օպերատիվ-հետախուզական գործողությունները կարող են իրականացվել բացառապես դատարանի որոշմամբ:
- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը սահմանում է, որ անձանց նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու համար հիմք է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի պատճառաբանված որոշումը (նշվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, միջոցառման իրականացման տեղը և ժամկետը, ինչպես նաև այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են դատարանին՝ որոշում կայացնելու համար): Սույն հոդվածի վերլուծությունից բխում է, որ դատարանը դիտարկում է, որպես կանոն, օրինականությունը, իսկ հիմնավորվածության

հետ կապված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող այլ նյութերը հաճախ չեն ներկայացվում այն պատճառաբանությամբ, որ կա պետական կամ ծառայողական գաղտնիքի խախտման վտանգ կամ երբ կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք, համապատասխան տեղեկությունների ստացման աղբյուրները և դրանց ստացման եղանակները:

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 294-րդ հոդվածի համաձայն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և/կամ անհիմն որոշումները և գործողությունները կարող են բողոքարկվել դատարան կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

Դատական վերահսկողությունը, փաստորեն, կենտրոնացած է օրենքի տառի պահանջների պահպանությունը վերահսկելուն: Ասենք, «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը» օպերատիվ-հետախուզական միջոցառումը կարող է իրականացվել, եթե առկա է կաշառակերության հանցակազմի սուբյեկտ, հակառակ դեպքում այս ՕՀՄ իրականացումը անօրինական է: Այս կամ այն ՕՀՄ ընտրության կամ ազգային անվտանգության մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքում ընտրված/կիրառված

եղանակների նպատակահարմարության հարցերը, փաստորեն, դուրս են դատական վերահսկողության դաշտից: Այլ կերպ ասած, դատական վերահսկողությունն առնչվում է բացառապես վերոնշյալ գործողությունների իրականացման թույլտվությանը, իսկ իրականացման գործընթացի օրինականությունը, փաստորեն, մնում է վերահսկողական դաշտից դուրս: Ինչպես վերը նշվեց, թվարկված մի շարք երաշխիքների պահպանման նկատմամբ բացակայում է որևէ մարմնի կողմից իրականացվող արդյունավետ վերահսկողություն:

Բերենք այլ լրացուցիչ օրինակներ: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանվում է կամայականությունների բացառումը պետական և ծառայողական գաղտնիքին հասանելիություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելիս, սակայն օրենսդրությամբ սահմանված չէ գաղտնի տեղեկատվությանը հասանելիության տրամադրումը մերժելու որոշման բողոքարկման որևէ հնարավորություն կամ թեև հստակ սահմանված է, որ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում անձին տրամադրվում է իր նկատմամբ իրականացված ՕՀՄ-ների արդյունքները, սակայն նրան կարող են պատասխանել, որ նման միջոցառումներ չեն իրականացվել և չկա որևէ լծակ ստուգելու այդ պատասխանի արժանահավատությունը: Անշուշտ, հսկողություն կարող է իրականացվել գործադիր իշխանության ներսում, ունենալ ներքին հսկողության գործող կառուցակարգեր, սակայն հաշվի առնելով, որ հսկողություն իրականացնող մարմինը կարող է հանդիսանալ ոչ օրինական գործունեություն ծավալելու նախաձեռնողը, անհրաժեշտ է նախատեսել իշխանության այլ ճյուղի կողմից գերատեսչականության շահերը բացառող վերահսկողական մեխանիզմներ: Այլ կերպ ասած, ազգային անվտանգության մարմինների գործունեության գաղտնի մեթոդների և միջոցների կիրառության հնարավորությունը պահանջում է նույնիսկ դատական վերահսկողության պայմաններում հետևողականորեն ապահովել ազգային անվտանգության մարմինների գործունեության արտաքին պետական վերահսկողության այլ մեխանիզմների կիրառություն, որոնցից առավել արդյունավետ պետք է դիտարկել

խորհրդարանական վերահսկողությունը: Վերջինիս իրագործմանը կարող է մասնակցել նաև խորհրդարանական մշտական հանձնաժողովներին կից ստեղծված և, որպես կանոն, անկախ պրոֆեսիոնալներից բաղկացած օժանդակող մասնագիտական մարմինները (Մեծ Բրիտանիա, Նորվեգիա և այլն):

ԳԼՈՒԽ 5.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ չի նախատեսվում ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմներ: Ինչպես նշվեց, ազգային անվտանգության մարմինների ոլորտում միակ հատուկ իրավակարգավորումն առկա է «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 27-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, կապված իրենց պատգամավորական գործունեության իրականացման հետ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն տեղեկություններ ստանալ ազգային անվտանգության մարմինների գործունեության մասին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված է պատգամավորների կողմից հարցում կատարելու հնարավորություն, սակայն պետական կառույցներն ունեն լայն հայեցողություն տեղեկությունը դասակարգելու պետական և ծառայողական գաղտնիք, դրանով իսկ խոչընդոտելով արդյունավետ խորհրդարանական վերահսկողության իրականացմանը: Հստակ սահմանված չէ պատգամավորների կողմից առավել արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու նպատակով “need to know”¹⁹ սկզբունքի կիրառման ընթացակարգերը: Ավելին, Ազգային անվտանգության ծառայության նկատմամբ որևէ նախարար չի իրականացնում արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն, ազգային անվտանգության մարմինները գտնվում են Ազգային անվտանգության ծառայության պետի անմիջական ղեկավարման ներքո, ով իր հերթին զինվորական է և ենթակա Վարչապետին: Այլ կերպ ասած, Ազգային

¹⁹ «Իմանալու պետքություն»

անվտանգության ծառայությունը Վարչապետի ենթակայության տակ գտնվող կառույց է, որն ունի հսկայական լիազորություններ, ինչպիսիք են ազգային անվտանգության սպառնալիքների բացահայտման նպատակով ընդհանրական տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը և առանձին տեսակի հանցագործությունների մասով նաև՝ քննություն, սակայն հաշվետվողականություն խորհրդարանին, ըստ էության, բացակայում է: Ավելին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների կառուցվածքը չի հիմնվում սույն զեկույցում քննարկված դիվերսիֆիկացիայի սկզբունքի հիման վրա:

Ազգային անվտանգության մարմիններին «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով վերապահված լիազորությունների ուսումնասիրությունը անհրաժեշտաբար պահանջում է վերահսկողական պատշաճ մեխանիզմների ապահովում, քանի որ դրանց որոշ մասն իրացվում է օպերատիվ-հետախուզական գաղտնի միջոցառումների իրականացմամբ, որոնց օրինականության ապահովումը կերաշխավորի մարդու և քաղաքացու արդյունավետ իրավունքների պաշտպանությունը, լիազորությունների չարաշահումը:

Ազգային անվտանգության մարմինների կողմից իրականացվող գործառույթների նկատմամբ վերահսկողական արդյունավետ մեխանիզմների իրացման խնդիրը, ինչպես նշվեց, խիստ անհրաժեշտություն է՝ պայմանավորված օպերատիվ-հետախուզական գործողությունների ընթացքում կիրառվող միջոցների և մեխանիզմների յուրահատկությամբ: Մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից վերջին տարիներին քննարկվող հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է միայն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը՝ նման գործողություն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի միջնորդության հիման վրա

օրենքով սահմանված կարգով: Գլխավոր վարչության պետին նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Վարչապետը, իսկ գլխավոր վարչության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրապետական մարմնի ղեկավարը՝ ԱԱԾ-ի պետը: Ավելին, հեռահաղորդակցության օպերատորների մոտ օպերատիվ-տեխնիկական պայմանների ապահովման պարտականությունը դրված է Գլխավոր վարչության վրա: Վերոնշյալ իրավակարգավորումները վկայում են այն մասին, որ հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական գործողության իրականացման հարցում ազգային անվտանգության մարմիններին է պատկանում կապուղի տրամադրելու բացառիկ իրավասությունը, իսկ տվյալ գերատեսչության, ինչպես նաև ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարների նշանակումը և պաշտոնից ազատումը գործադիր իշխանության մարմնի ղեկավարի կողմից նշանակում է, որ միանշանակորեն անհրաժեշտ է փոփոխել իրավական ընթացակարգերը՝ ազգային անվտանգության մարմինների կողմից հաշվետվողականությունը օրենսդիր մարմնի առջև ապահովելու համար: Անհրաժեշտ է վերահսկել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի անշեղ պահպանումը, համաձայն որի՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկման նպատակով ոստիկանությանը կամ քրեակատարողական ծառայության մարմիններին օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով (այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ), Գլխավոր վարչությանը և ազգային անվտանգության մարմիններին արգելվում է հսկել և/կամ ամրագրել այդ տվյալները, տեղեկատվությունը և հաղորդումները: Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է: Նշված գործողության իրականացումն

առնչվում է ինչպես ֆիքսված կապին, այնպես էլ բջջային կապի ծառայություններին, որոնց իրավակարգավորումները տրված են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 26-րդ հոդվածում: Հոդվածի բովանդակությունից բխում է, որ այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ձեռք է բերվում լայն շրջանակի տեղեկատվություն լայն շրջանակի անձանց վերաբերյալ՝ ինչպես վերահսկվող սուբյեկտի, այնպես էլ նրա հետ կապ ունեցող և անուղղակի ձևով կապ ունեցած հեռախոսահամարների օգտատերերի մասով՝ կապի միջոցով փոխանցվող տեղեկատվության բոլոր եղանակների վերահսկմամբ: Նույն սկզբունքով պետք է գնահատել նաև ներքին դիտում և մյուս օպերատիվ-հետախուզական միջոցառումների խնդիրը, որոնց դեպքում ևս անձի ներքին կյանքի վերահսկման գործոնն ուղղակիորեն բխում է դրանց բովանդակությունից²⁰: Վերջապես, ի տարբերություն այլ իրավապահ մարմինների, որոնք նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացնել բացառապես քրեաիրավական դաշտում, կամ այլ կերպ ասած՝ հետաքննության և նախաքննության կամ քրեական գործերի շրջանակներում ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատախազական հսկողության ներքո, ազգային անվտանգության մարմինների կողմից վերոնշյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարող են իրականացվել նաև որպես հետախուզական, հակահետախուզական և ռազմական հակահետախուզական գործառույթների իրականացման շրջանակներում, ինչը ենթադրում է մարդու իրավունքների խախտումների ռիսկայնության առավել բարձր մակարդակ և պահանջում է հաշվետվողականության բարձր մակարդակ և ամրագրել խորհրդարանական վերահսկողության արդյունավետ կառուցակարգեր բացը (անվերահսկելի ոլորտը) լրացնելու նպատակով:

²⁰ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին հետևելն է ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Ընդ որում, բնակարան իմաստը պետք է դիտարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Ազգային անվտանգության մարմինները՝ հետախուզական, հակահետախուզական և այլ ծառայությունները պետք է հաշվետու լինեն գործադիր և օրենսդիր իշխանությանը: Որպես դրա իրականացման մեխանիզմ պետք է լինի ազգային անվտանգության հիմնարար փաստաթղթերի՝ ազգային անվտանգության ռազմավարության ընդունումը Ազգային ժողովի կողմից, կենսագործման գերատեսչական փաստաթղթերի հաստատումը Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից: Հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ղեկավարների տարեկան հաշվետվությունները և զեկույցները պետք է քննարկվեն ԱԺ-ում՝ համադրելով բաց և փակ ռեժիմները: Հաշվետվությունների քննարկման արդյունքում պետք է ապահովված լինի համապատասխան գերատեսչությունների ղեկավարների իրենց պաշտոնին համապատասխանության հարցի բարձրացման հնարավորությունը և քննարկմանը ապահովել Վարչապետի մասնակցությունը:

Ազգային անվտանգության մարմինների հաշվետվողականությունը օրենսդիր մարմնին բարձրացնելու նպատակով կառաջարկենք նաև ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի մասնակցությամբ կազմակերպել ազգային անվտանգության հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ղեկավարների կիսամյակային հաշվետվությունների քննարկում, ըստ անհրաժեշտության նաև ԱԺ ամբողջ կազմով քննարկման կազմակերպում փակ ռեժիմով: Նմանապես, մշտական հանձնաժողովի անդամների կողմից կարող են պատրաստվել հետախուզական և հակահետախուզական ծառայությունների գործունեության արդյունքների վերաբերյալ եռամսյակային զեկույցներ և ներկայացվել ԱԺ-ին: Ավելին, ԱԺ մշտական հանձնաժողովին հնարավորություն պետք է ընձեռել ծանոթանալու Անվտանգության խորհրդում հետախուզական և հակահետախուզական տեղեկատվության վերլուծությանը, տրամադրել օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հետ կապված մարդու իրավունքների պաշտպանության առնչվող տեղեկատվությանը հասանելիություն՝ համապատասխան փաթեթներին հասանելիություն ապահովելով՝ ծածկագրային

գաղտնիքի ապահովման երաշխիքներով և մեխանիզմներով: Այստեղ որոշ գործառույթներ կարող են վերապահվել Հանձնաժողովին կից աջակից մարմնին ձևավորման դեպքում, որը ենթադրաբար բաղկացած կլինի անկախ փորձագետներից (ավելին մանրամասն ստորև): Նույն տրամաբանությամբ հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ընթացիկ գործունեության ռազմավարությունների վերաբերյալ հասանելիություն կարող է տրամադրվել ԱԺ մշտական հանձնաժողովի անդամներին: Կարելի է դիտարկել նաև առանձին պաշտոնատար անձանց նշանակման հարցում Ազգային ժողովին կամ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովին վերապահելու որոշակի լիազորություններ (թեկնածուների ընտրություն, նշանակված թեկնածուի հաստատում, վետոյի իրավունք, նախնական հավանություն և այլն):

Ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողական մեխանիզմների կիրառության տեսանկյունից արդյունավետ համակարգեր են նախատեսում ԱՄՆ իրավակարգավորումները: Ամերիկյան վարչակազմի ընդունած որոշումները ազգային անվտանգության ոլորտում ենթակա են մշտական հսկողության, որի իրավական ընթացակարգը այդ որոշումների վրա ներազդելու և ճշգրտելու արդարացված գործառույթն է՝ կանոնավոր լսումների ընթացակարգը, որը ստիպում է գործադիր իշխանությանը Կոնգրեսի առջև մանրակրկիտ կերպով հիմնավորել ազգային անվտանգության ոլորտի ռազմավարական փաստաթղթերը²¹: Նման ընթացակարգը պարտադրում է ամերիկյան վարչակազմին գտնվել մշտական հաշվետվողականության դաշտում, լայնորեն օգտվել փորձագիտական շրջանակի աշխատանքներից, կազմակերպել իրապես ազգային անվտանգությունն ամրապնդող ռազմաստրատեգիական քաղաքականություն: Այս տեսանկյունից ԱՄՆ-ում ազգային անվտանգության համակարգերը հնարավորություն են ստեղծում ապահովել ստրատեգիական կայունություն, միաժամանակ ապահովելով ոլորտում ճկունություն՝

²¹ Հարկ է շեշտել, որ ճյուղային գերատեսչությունների գործունեության գաղտնի մեթոդաբանությունը չի ներառված: Մինչդեռ, լսումներում կարող են քննարկվել հաշվետվությունները նաև գաղտնի մեթոդաբանության արդյունքների մասով:

քաղաքականության ուղղությունները ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու առումով:

Հանձնաժողովին, մասնավորապես օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ պրոֆեսիոնալ վերահսկողություն իրականացնելու նպատակով առաջարկվում է ձևավորել Հանձնաժողովին կից օժանդակող մարմին: Հանձնաժողովին կից անկախ մարմնի գոյությունը հիմնավորվում է հետևյալ պնդումներով.

- Պատգամավորները քաղաքական գործիչներ են, մինչդեռ առանձին հարցերի վերաբերյալ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ են պրոֆեսիոնալներ: Ուստի, հատկապես անվտանգության ոլորտում խորհրդարանական կառավարման երկրներում մեծ թիվ են կազմում նման կառույցների գոյությունը, որոնք բաղկացած են ազգային անվտանգության նախկին աշխատակիցներից, դատավորներից, հետախույզներից, դասախոսներից, որոնք աջակցում են խորհրդարանին իրականացնել խորհրդարանական արդյունավետ վերահսկողություն: Իսկ այն հակափաստարկին, որ նման մասնագետներ կարող են ներգրավվել որպես փորձագետ և կարիք չկա ձևավորել ինքնավար անկախ մարմին, կարող ենք առարկել, պնդելով, որ այդ դեպքում մեծապես կնստեմացվի նրանց անկախությունը, չի բացառվի իրենց գործունեության մեջ քաղաքական տարրը և չի ապահովվի ինքնավարությունը:
- Անկախ պրոֆեսիոնալներից բաղկացած մարմինների գոյության կարևորությունը կայանում է նրանում, որ խորհրդարանը առաջնորդվում է հաճախ քաղաքական նպատակներով, իրականացնում քաղաքական մոտիվներով քվեարկություններ, մինչդեռ անկախ պրոֆեսիոնալների մասնակցությամբ մարմինները անկախ են և գործում են անկաշկանդ:
- Հատկապես մեր երկրում, երբ հետաքննություններ իրականացնելու նպատակով խորհրդարանական քննիչ հանձնաժողովների ձևավորումը պահանջում է քվեարկություն ԱԺ-ում, այլ կերպ ասած՝ պաշտպանության և

անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովը չի կարող նախաձեռնել քննիչ հանձնաժողովի գործառույթներ, և դրանց ձևավորումը ենթադրում է քաղաքական գործընթացներ, խորհրդարանին կից անկախ մարմինները կարող են նախաձեռնել հետաքննություններ և հրապարակել զեկույցներ:

- Այս ինքնավար, Հանձնաժողովին աջակից մարմինները առավել արդյունավետ կաշխատեն քաղաքացիական հասարակության հետ: Հասարակական կազմակերպությունները, ոլորտի մասնագետները երբեմն չեն ցանկանում համագործակցել խորհրդարանի հետ, հաշվի առնելով անդամների քաղաքական ուղղվածությունը և գործունեության քաղաքական համատեքստը: Խորհրդարանը պետք է լինի կամուրջ քաղաքացիական հասարակության և գործադիր իշխանության միջև: Ահա, այս անկախ մարմինների գոյությունը առավել անկաշկանդ է դարձնում քաղաքացիական հասարակության մասնակցությունը:
- Հանձնաժողովին աջակցող ինքնավար այս մարմինների ձևավորումը դիտարկվում է իբրև զիջում քաղաքական փոքրամասնությանը, երբ վերջիններիս առաջարկվում է ներկայացնել որոշակի քանակի անդամների թեկնածություն: Սա ապահովում է նաև փոքրամասնությանը առավել լսելի լինելու և այս մարմինների նկատմամբ ապահովվում է բարձր վստահություն:
- Հաշվի առնելով անվտանգության ոլորտի գերատեսչությունների նկատմամբ խորհրդարանի վերահսկողական լայն լծակների առկայությունը (բյուջեի ընդունում, բյուջեի կատարման նկատմամբ հսկողություն և այլն) առավել նպատակահարմար է այս կառույցները ձևավորել Հանձնաժողովին կից (այլ ոչ թե ասենք Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Բարձրագույն դատական խորհուրդ և այլն): Գործադիր իշխանությունը ավելի զգոն է լինում, երբ այդ մարմինը գործում է օրենսդիր մարմնի գործունեության դաշտում:

Հանձնաժողովին կից ինքնավար կառույցը ոչ թե վերահսկում է կոնկրետ մարմնի, այլ կենտրոնացած է որոշակի գործողություններ իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների գործունեության վրա, ասենք՝ բոլոր կառույցները, որոնք ունեն լիազորություններ իրականացնելու օպերատիվ-հետախուզական գործունեություն (Հայաստանի Հանրապետության պարագայում՝ ազգային անվտանգության մարմիններ, ոստիկանություն, ռազմական ոստիկանություն և պաշտպանության նախարարության հետախուզական մարմիններ):

Հանձնաժողովին կից, նրան օժանդակող ինքնավար այս մարմինը կարող է բաղկացած լինել հինգ անդամներից (այսուհետ նաև՝ **Անդամներ**): Ընդ որում, Անդամների մանդատի տևողությունը ցանկալի է մեկ տարի ավել լինի քան գործող խորհրդարանի մանդատն է, որպեսզի Անդամները չասոցացվեն գործող քաղաքական պալիտրայի հետ: Անդամները պետք է ունենան նաև հատուկ կարևորության տեղեկատվությանը հասանելիություն²²:

Հանձնաժողովին կից անկախ կառույցը պետք է իրավասություն ունենա ազգային անվտանգության մարմիններ ստուգայցեր կատարելու, պահանջելու ուսումնասիրման նպատակով առանձին գործեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման փաթեթներ, քննելու ստացված բողոքները, իր նախաձեռնությամբ բարձրացնելու առանձին հարցեր, կատարելու վերլուծություններ: Այն կարող է գործել սեփական նախաձեռնությամբ, ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովի ցուցումով կամ ստացված բողոքի հիման վրա: Անդամները պետք է պարզեն՝ խախտվել են արդյո՞ք մարդու իրավունքները, պաշտպանվել են արդյո՞ք առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման օրենքով սահմանված կարգն ու պայմանները, պահպանվել են արդյո՞ք սահմանված երաշխիքները, ճիշտ է

²² Պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն էլնելով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների կարևորությունից, բնույթից, դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից՝ սահմանվում են գաղտնիության երեք աստիճաններ՝ «Հատուկ կարևորության», «Հույժ գաղտնի» և «Գաղտնի»:

գնահատվել նպատակին հասնելուն ուղղված եղանակների նպատակահարմարությունը, այլ կերպ ասած՝ մարդու իրավունքների սահմանափակման մեխանիզմներ կիրառելիս օրինականության, համաչափության, անհրաժեշտության և արդյունավետության սկզբունքների կիրառումը: Անձնական տվյալներ մշակելիս Հանձնաժողովին կից անկախ այս մարմինը քննելու է արդյո՞ք ազգային անվտանգության մարմինները առաջնորդվել են անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքով, սահմանվել է արդյո՞ք անձնական տվյալների մշակման որոշակի նպատակ, նախատեսվել են արդյո՞ք սահմանված նպատակին հասնելու համար անձնական տվյալների մշակման պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոցներ, ապահովվել է արդյո՞ք սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն քանակի անձնական տվյալների մշակում, նախատեսվել է արդյո՞ք անձնական տվյալների այնպիսի ժամկետ, որն անհրաժեշտ է սահմանված նպատակին հասնելու համար: Նմանապես, այս մարմինը պետք է հետևի, որպեսզի չիրականացվեն անձնական տվյալների այնպիսի մշակում, որն անհրաժեշտ չէ սահմանված նպատակին հասնելու համար կամ չնախատեսվի անձնական տվյալների մշակում, եթե սահմանված նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված ձևով և այլն:

Անվտանգության ոլորտում խորհրդարանական վերահսկողությանը աջակից այս մարմինը սկանդինավյան երկրներում չունի լիազորություն կարգադրելու պետական կառույցներին որևէ գործողություն կատարելու, իր որոշումները որպես կանոն կրում են ռեկոմենդացիոն բնույթ, սակայն իրականում ունեն բարձր կշիռ և պարտադիրության բնույթ: Կիրառելի կարող է լինել նաև սուվիչների ինստիտուտը (անգլ.՝ whistle blower), երբ ազգային անվտանգության մարմիններում աշխատող անձինք կապ են հաստատում Անդամի հետ, երբ նկատում են թերություններ կամ օրենքի խախտումներ համապատասխան գերատեսչությունում:

Հանձնաժողովին կից գործող անկախ այս մարմինը տարեկան զեկույց պետք է ներկայացնի ԱԺ-ին, որտեղ կբացահայտվի ազգային անվտանգության

մարմիններում առկա խնդիրները, կմատնանշվեն արձանագրված խախտումները, ձևավորված թերի պրակտիկան, ինչը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության կառավարությանը և պատգամավորներին առաջարկելու համակարգային լուծումներ: Նմանապես, պատգամավորներին պետք է տրվի հնարավորություն առաջադրելու լրացուցիչ հարցեր, որոնց պետք է պատասխանի մասնագիտական անկախ այս մարմինը: Կարևոր է, որպեսզի համապատասխան ծառայության նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող նախարարը (ներքին գործերի նախարար, պաշտպանության նախարար, արտաքին գործերի նախարար, արդարադատության նախարար և այլն) հանդես գա տարեկան զեկույցում առկա թերությունների շտկման ուղղությամբ իր ծրագրով: Միննույն նիստի շրջանակում, Հայաստանի Հանրապետության ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովին կից ձևավորված աջակից մարմնի նախագահը պետք է զեկուցի նախորդ տարվա ծրագրով համապատասխան նախարարի կողմից ստանձնած և իրականացված միջոցառումների մասին, դրանով իսկ, ըստ էության, տալով գնահատական կոնկրետ նախարարի գործունեությանը: Վերջապես, սույն պարագրաֆում Հանձնաժողովին լրացուցիչ լիազորություններով օժտելու առաջարկները կարող են նմանապես վերաբերել Հանձնաժողովին կից ձևավորված մասնագիտական կառույցին (պատրաստել եռամսյակային զեկույցներ, ունենալ հասանելիություն և այլն):

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով ազգային անվտանգության մարմինների կազմակերպական և գործառնության հիմնախնդիրների, վերջիններիս գործունեության նկատմամբ գերատեսչական և արտագերատեսչական հսկողական և վերահսկողական իրավական մեխանիզմների վերաբերյալ տեսակետների և առաջատար երկրների փորձը, կարող ենք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ հետևյալ առաջարկները.

- Ձևավորել Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկատվությունը տարբեր բնագավառներում վերլուծող և զտող ուղեղային համակարգ-կենտրոններ: Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացները և աննախադեպ թափ ստացած համահարթեցումը, երբ պետությունների միջև գծված քաղաքական սահմանները կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, անհրաժեշտ է ներմուծել կամ կատարելագործել անվտանգային կանխարգելիչ ինստիտուտները:
- Քննարկել ազգային անվտանգության գործող համակարգում գործառնությունների և մարմինների տարանջատման հնարավորությունը, որը կնպաստի պրոֆեսիոնալ կարողությունների զարգացմանը ըստ ազգային անվտանգության ապահովման ուղղությունների, ինչն իր հերթին ապահովում է գործունեության մեթոդաբանության տարբերակում, բացառում բոլոր լծակների կենտրոնացումը մեկ մարմնի ներքո: Մասնավորապես, տարանջատել հետախուզական և հակահետախուզական ծառայություն իրականացնող ստորաբաժանումները՝ համապատասխանաբար առանձին պետական կառավարման մարմինների կարգավիճակով: Իրավապահ գործառնությ

իրականացնել բացառապես ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով:

- Քննարկել հետախուզության և հակահետախուզության բնագավառում օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողության մեխանիզմների ներդրման օրենսդրական հնարավորությունների հարցը՝ այլ երկրների փորձի ուսումնասիրությամբ և գաղտնիության ռեժիմի պահպանման պայմանով:
- Դարձնել ազգային անվտանգության մարմինները՝ հետախուզական, հակահետախուզական և այլ ծառայությունները, գործադիր և օրենսդիր իշխանությանը իրապես հաշվետու մարմիններ: Դրա իրականացման մեխանիզմը ազգային անվտանգության հիմնարար փաստաթղթերի՝ ազգային անվտանգության ռազմավարության ընդունումն է Ազգային ժողովի կողմից, կենսագործման գերատեսչական փաստաթղթերի հաստատումը ՀՀ վարչապետի կողմից: Սահմանել հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ղեկավարների տարեկան հաշվետվությունների քննարկում ԱԺ-ում՝ համադրելով բաց և փակ ռեժիմները: Դիտարկել հաշվետվությունների քննարկման արդյունքում անվտանգության հարցի բարձրացում և այդ քննարկմանը վարչապետի մասնակցայնության ապահովում²³:
- Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության ապահովման համակարգում ներմուծել պետության անվտանգության համար պատասխանատու կոլեգիալ մարմնի՝ կոնկրետ դեպքում Անվտանգության խորհրդի²⁴ կողմից ազգային անվտանգության մարմինների աշխատանքը համակարգելու տրամաբանությունը: Ազգային անվտանգության ապահովման տրամաբանության մեջ ազգային անվտանգության ռազմավարական փաստաթղթերը մշակել

²³ Այս իրավակարգավորումների վերաբերյալ հստակեցումներ կատարել սահմանադրաիրավական բարեփոխումների շրջանակներում:

²⁴ Որպես այդպիսի մարմին կարող է հանդես գալ նաև անվտանգության ոլորտի այլ սահմանադրական մարմին:

Անվտանգության խորհրդի կողմից, դրանք հանրային մասնակցայնության բարձր մակարդակով դարձնել գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների կողմից համատեղ քննարկման առարկա, ինչպես նաև ռազմավարական փաստաթղթերի հիման վրա ընդունել ազգային անվտանգության ճյուղային կառավարման մարմինների համակարգի գործունեության սկզբունքները²⁵: Վերականգնել Հայաստանի Հանրապետությունում ակնհայտորեն խաթարված ռազմավարական փաստաթղթերի և այլ իրավական ակտերի հիերարխիկ կառուցվածքի տրամաբանությունը (ռազմավարությունները, որպես հիմնական իրավական փաստաթուղթ, պետք է ընդունել հանրային լայն մասնակցայնության և իրավական առավել բարձր ուժ հաղորդող մարմնի կողմից, ինչից բխեցվեն ի կատարումն դրա այլ իրավական ակտեր):

- Ընդլայնել Անվտանգության խորհրդի կազմը ազգային անվտանգության ծառայությունների հետախուզական և հակահետախուզական ստորաբաժանումների ղեկավար կազմով, պետության ֆինանսական և էներգետիկ համակարգերի պատասխանատու ղեկավարների կազմով²⁶:
- Դիտարկել առանձին պաշտոնատար անձանց նշանակման հարցում Ազգային ժողովին կամ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովին որոշակի լծակներ վերապահելու հնարավորությունը (թեկնածուների ընտրություն, նշանակված թեկնածուի հաստատում, վետոյի իրավունք, նախնական հավանություն և այլն): Երրորդ գլխում առաջարկվել է Ազգային անվտանգության ծառայության պետին ընտրել Ազգային ժողովի կողմից որոշակի ժամանակահատվածով, ինչպիսի կարգավորում նախատեսված է ասենք Գլխավոր դատախազի վերաբերյալ:
- Կազմակերպել ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովի մասնակցությամբ ազգային անվտանգության

²⁵ Ազգային անվտանգության ճյուղային կառավարման մարմիններն են դիտարկվում հետախուզական և հակահետախուզական գործառույթ իրականացնող մարմինները:

²⁶ Վերջնական կազմի հարցը որոշել քննարկումների արդյունքում:

հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ղեկավարների կիսամյակային հաշվետվության քննարկում, ըստ անհրաժեշտության ԱԺ ամբողջ կազմով քննարկում՝ փակ ռեժիմով: ԱԺ մշտական հանձնաժողովին Անվտանգության խորհրդում հետախուզական և հակահետախուզական տեղեկատվության վերլուծության մանդատի ընձեռում, այդ գործընթացների հետ կապված մարդու իրավունքների ապահովման տեղեկատվության մատչելիության ապահովում՝ օպերատիվ-հետախուզական գործունեության, միջոցառումների մասով՝ համապատասխան փաթեթներին հասանելիության ապահովում՝ ծածկագրային գաղտնիքի ապահովման երաշխիքներով և մեխանիզմներով:

- Մշտական հանձնաժողովի անդամների կողմից ըստ մանդատների հետախուզական և հակահետախուզական ծառայությունների գործունեության արդյունքների վերաբերյալ փակ ռեժիմով եռամսյակային զեկույցների պատրաստում և ներկայացում ԱԺ-ին:
- Հետախուզական և հակահետախուզական ծառայությունների ընթացիկ գործունեության ռազմավարությունների հասանելիությունն ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի և տեղակալի մակարդակով:
- Հստակեցնել գաղտնագրման իրավական հիմքերը, մասնավորապես «գաղտնիքը իմանալու պետքության» (need to know), «վնասի թեսթ»-ի (տեղեկատվության հրապարակման արդյունքում պատճառվելիք հնարավոր վնասի գնահատում) սկզբունքների իրացման մեխանիզմները: Տեղեկատվությունը գաղտնագրելիս առաջնորդվել գլխավորապես «վնասի թեսթ»-ի սկզբունքով, այլ ոչ թե բացառապես որոշակի ոլորտներին, հարցերին վերաբերող տեղեկատվությունը ինքնակամ գաղտնագրելով: Սահմանել գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելը մերժելու որոշման բողոքարկման հնարավորություն, ինչպես նաև ներմուծել գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն ունենալու հավաստագրման ինստիտուտը (ինչի պարագայում անձը կունենա հասանելիություն գաղտնիության նույն կարգի ցանկացած

տեղեկատվությանը, եթե հիմնավորի տեղեկատվությանը ծանոթանալու անհրաժեշտությունը անկախ նրանից թե որ գերատեսչությունն է տնօրինում տվյալ տեղեկատվությունը): Ազգային անվտանգության ծառայության փոխարեն գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելու, ոլորտի օրենսդրության ապահովման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, մասնավորապես պարբերական գաղտնագերծումներ կատարելու, տեղեկատվության պաշտպանության ոլորտում օրենսդրության պահանջների պահպանումն ապահովելու լիազոր մարմնի դերում դիտարկել այլ կառույց:

- Իրավունքի ուժով տալ հասանելիություն Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովում ներգրավված պատգամավորներին, անհրաժեշտության դեպքում որոշակի երաշխիքների պահպանմամբ սահմանել այս հանձնաժողովում ներգրավվելու վեթինգի մեխանիզմներ կամ առնվազն օրենքի ուժով տալ գաղտնի տեղեկատվությանը հասանելիություն Հանձնաժողովի նախագահին և կամ տեղակալին:
- Ձևավորել Ազգային ժողովին կամ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերով մշտական հանձնաժողովին կից անվտանգության ոլորտի նկատմամբ արդյունավետ վերահսկողությանը օժանդակող մարմին (դիտարկել Նորվեգիայի մոդելը): Օժանդակող մարմնին տալ ազգային անվտանգության մարմիններ ստուգայցեր կատարելու, ուսումնասիրման նպատակով առանձին գործեր, օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման փաթեթներ պահանջելու, ստացված բողոքները քննելու, իր նախաձեռնությամբ առանձին հարցեր բարձրացնելու, վերլուծություններ կատարելու լիազորություններ: Օժանդակող մարմինը կարող է գործել սեփական նախաձեռնությամբ, ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովի ցուցումով կամ ստացված բողոքի հիման վրա: Օժանդակող մարմինը պետք է բաղկացած լինի վստահություն վայելող

փորձագետներից, պաշտոնաթող դատավորներից, տեսաբաններից, որոնք կընտրվեն Ազգային ժողովի կողմից: Օժանդակող մարմինը հանդես կգա առնվազն տարեկան զեկույցով կամ կներկայացնի թեմատիկ արտահերթ զեկույցներ, կտա ռեկոմենդացիաներ: Օժանդակող մարմնի ընթացիկ տարեկան զեկույցը քննարկելիս Ազգային ժողովը կարող է քննել նախկին տարեկան զեկույցում, արտահերթ զեկույցներում բարձրացված հարցերին տրված լուծումները, ձեռնարկված քայլերը իրենից բխող հետևանքներով: Հարկ է նկատել, որ DCAF-ի /Ժնևյան կենտրոնի/ կողմից առաջարկվեց իբրև այլընտրանք դիտարկել նաև Ազգային անվտանգության ծառայության և օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասություն ունեցող այլ կառույցների նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու նպատակով Ազգային ժողովում մշտական հանձնաժողովի ձևավորումը: Ընդ որում, վերջինս կունենա ներկայացուցիչներ խորհրդարան անցած բոլոր քաղաքական ուժերից, որոնք, պետք է անցնեն վեթինգ Ազգային անվտանգության ծառայություն անցնելու չափանիշներին համապատասխան: Արդյունքում, առկա է երկու տարբերակ՝ անկախ փորձագետների ինքնավար կառույց կամ պատգամավորներից բաղկացած հանձնաժողով, որին կսպասարկի փորձագետներից բաղկացած քարտուղարությունը: